

մխիթարութեամբ¹ կարծեալ զընդունելեացն յաւժարութիւնն² եւ ընդունելեացն³ յուսով ուրախութեան՝ դասաւորութիւն⁴ ճանապարհացն աւետաբեր:

7 Բայց մի՛ ոք յանդգնագոյն վասն ասացելոցն զմեզ համարեսցի, թէ զհարդ զայր մի խոնարհագոյն ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախաւսին, սքանչելագործին⁵ նմանեցուցեալ հաւասարեաց. որով թերեւս սոգտանիցեմք⁶: 8 Եւ կարեմք⁷ այլ աւելի հաւատովք. քանզի եւ չկայ ինչ ի վերայ յայտնեալք եւ ծածկականաւք⁸ զաստուածականն խոտել, քանզի միոյն⁹ Աստուծոյ ամենազաւրի շնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին:

9 Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն¹⁰, ազդ լինէր թագաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: 10 Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն¹¹ ելեալ՝ պատահէին երանելւոյն¹² զափամբ Ռահ գետոյն: 11 Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի եւ բարբառաւք ցնծութեան եւ երգաւք հոգեւորաւք եւ բարձրագոյն¹³ աւրինութեամբք ի քաղաքն դառնային, եւ զաւուրս տաւնական ուրախութեամբ անցուցանէին:

[Ժ]

1 Ապա առեալ երանելի հոգաբարձուացն¹⁴ զյանկարծագիւտ¹⁵ խնդրելին¹⁶, հայցէին եւս¹⁷ յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել¹⁸ մարթասցեն¹⁹: 2 Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով եւ յաստիճան իսկ

1 *Ճա Ճբ* ուրախութեամբ *փխ*. մխիթարութեամբ

2 *bc* զյօժարութիւնն

3 *Ճա Ճբ* կարծել զյօժարութիւն ընդունելեացն / *abcde* ընդունելոց: *Այստեղից ընդհատում եւ Ճա Ճբ*:

4 *b* դատաւորութիւնն

5 *b* սքանչելագործի

6 *bc* զգտանիցեմք

7 *b* կերեմք / *c* կրեմք

8 *abcde* ծածկանօք

9 *bc* միայն

10 *e* ի քաղաքն թագաւորական

11 *bc* ամբոխն քաղաքին

12 *c* երանելոյն

13 *de* բարձրածայն

14 *bc* հոգիբարձուացն / *Ճա Ճբ* հոգեբարձացն

15 *b* զյանկարծագիւտ / *միւսն*. զյանկարծագիւտն

16 *c* խնդրելին / *միւսն*. խնդրէին

17 *Ճա Ճբ չիք* եւս

18 *abcde* չիք արծարծել

19 *Ճա Ճբ* արծարծել մարթասցեն / *abcde* մարթեսցեն